



Ավետիք Իսահակյան

Գե Բառ-Ցյուանին, 1955թ . , հոկտեմբեր

Միրելի ընկեր Գե Բառ-Ցյուան.

Մեծ շնորհակալությամբ ստացել եմ Ձեր նամակը և ամսագիրը: Անչափ ուրախ եմ, որ իմ պոեզիան գրավել է ձեր ուշադրությունը, և այժմ էլ դուք նվիրված աշխատանք եք տանում իմ բանաստեղծությունները ներակայացնելու շինական լեզվով:

Մանուկ օրերից ես հեքիաթների, ճանապարհորդների գործերի և բազմաթիվ նկարների մեջ տեսել եմ շինացուն և նրա մեծ արվեստը, սիրել եմ ու հիացել դրանցով: Ժողովուրդները պիտի սիրեն իրար, իրար սիրելու համար պիտի ճանաչեն միմյանց, դրան հասնելու ամինախնաստուն ճանապարհը իրար գրականության և արվեստների ճանաչումն է:

Մենք՝ գրական գործիչներս, վառված միևնույն գաղափարներով, իդեալով ու նպատակով, աշխատում ենք համաշխարհային խաղաղության և եղբայրության համար, ահամամարդկային երջանկության համար: Բոլոր սրտով ցանկանում եմ Ձեր գործին հաջողություն:

Կարոտով սեղմում եմ իմ հեռավոր, բայց մոտիկ բարեկամիս ձեռքը:

Ավ. Իսահակյան